


Հ. Բուհական

219

Ճնշող Աստված



Բիգիկ  
1896

8-95

Հրատ. Փիլիպպոս Վարդազարեանի

փոփոխած

Լոնգի Ջիւլյուքս

սոէմս

Յովհաննէս Թումանեանցի

891.99  
Բ-95

Հ

" \$ 2004

95700 - 02

3371

31. 99

2 - 95

Հրատ. Փիլիպպոս Վարդազարեանի

Կ

2/4-74

ԼՈՐԵՑԻ ԱՐՔՈՆ

Խարեցական  
Հրատ. Վ. Բարձրականութեան

Յովհաննէս Թումանյանցիւ



ԹՎԱԿԱԶ

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. | Տիպogr. Ի. Մարտirosianca.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го марта 1896 года.



81-2014  
1881



## I.

Խոր ձորի միջին ահա մի տղնակ,  
Այնուղ այս գիշեր Սաքօն է մենակ:  
Հովիւ է Սաքօն, ունի մի ընկեր.

Նա էլ այս գիշեր—  
Հացը պակասեց, շընալիր \*) ըրկար,  
Աղ էր հարկաւոր ոչխարի համար,  
Ուզեց զոքանչի ձբւածեղ ուտել,  
Թիէ նշանածին շատ էր կարօտել,—  
Գնացել է տուն.

Այն ինչ համկալը \*\*\*) հէնց առաւօտը  
Դէպի սարերը քըշեց իւր հօտը:  
Եւ Սաքօն անքոն,

\*) Ճնալիր—այն ալիւըն է, որ շների համար լավ են  
պատրաստում:

\*\*) Համկալ—գութանի, սարի կամ կալի ընկեր:

Թաց տըրեխները հանել է, քերել,  
Գուլքան բուխարու վրայ կախ աղել,  
Ու թինկը տըւել,  
Մեն-մենակ թըթւել:

### II.

Թէկուզ և մենակ լինի փարախում,  
Աժդահա Սաքօն ընչից է վախում.  
Հապա մի նալիր նորա հասակին,—  
Ո՞նց է մեկնըւել, կարծես ահագին  
Կաղնըքի լինի անտառում ընկած....  
Բաց եթէ տեղից վեր կացաւ յանկարծ,  
Դըլուխը մեխած մահակը վերցրեց,  
Եթէ շըներին ձայն տւեց, կանչեց  
Ու բիրու, փայինի առաջըդ կանդնեց,  
Գու կը հասկանաս, թէ ինչու համար,  
Գող, գայլ ու գազան, ողջ լեղապատառ,  
Հէնց դատարի վախից  
Հեռու են փախչում նորա փարախից:

### III.

Նորա փարախին հսկում է Զօրին,  
Ազագիլ Զօրին հսկում է անքուն,  
Ներքեւ է բերում նա ձիաւորին,  
Ղուշն էլ չի անցնում նրանից թագուն:

Թէպէտեւ Սաքօն եղբայրներ ունի  
Ու նրանց համար արիւնը կըտալ,  
Բաց Զօրու նման էլ ով կըլինի,  
Նրան հաւասար եղբայր էլ չըկալ:

Մըթնաղիշերին հեղեղ է թափում,  
Հողմը վշշում է, շանթը փայլկըտում,  
Սաքոյի վրայ գազանը դալիս,  
Սաքոյի հօտին զող վրայ տալիս,  
Քնած է Սաքօն, բան չէ իմանում,  
Զօրին է նրանց դիմացը կանդնում:

Ընկել է Սաքօն թշնամու հետքին,  
Կուտում է Սաքօն թշնամու դիմաց,—  
Զօրին դալիս է իւր հետ-կըլնկին,  
Իւր կողքին դարձեալ Զօրին է կանդնած:

Նորա փարախին հսկում է Զօրին,  
Ազաղիլ Զօրին հսկում է անքուն,  
Ներքեւ է բերում նա ձիաւորին,  
Ղուշն էլ չի անցնում նրանից թագուն:

### IV.

Ո՞վ ես, գու, հէյ անցւորական,  
Որ թէպէտեւ պարզ օրով,  
Ալգպէս անվախ, անհրացան  
Անց ես կենում այս ձորով:

Ասենք իսկի չես վախենում  
Ոչ գազանից, ոչ բանից,  
Հապա ինչպէս ահ չես անում  
Այս ձորերի չոբանից:—

Գուցէ նրան անդլուրելան  
Մի տղամարդ եղար դու, —  
Ծոռիր ճամբէդ, օտարական,  
Կանչիր անունն Աստղու:

Հեշտ կազատես անդունդներից,  
Յորձանքներից այս գետի,  
Բայց Սաքովի չար հանաքից  
Թող քեզ Աստւած աղատի:

Սակայն եթէ մի վիշտ ունես,  
Որ կարող է նա օգնել,  
Թէ սիրուհիդ մերժում են քեզ, —  
Ապա բարով ես եկել:

Թէ թուրքերը զաւակներիդ  
Փուփիը \*) կտրել են, տարել,  
Այժմ ուզում ես դարձնել գերիդ, —  
Կըրկին լաւ ես միտք արել:

\*) Փուփի—երեխացի կերակուր, աւելի կաթ, մածոն  
և այլն, այստեղ կթի անասուն կը նշանակի:

Այնժամ նրան գոնէ մի օր  
Եղիր դոնախ թանկաղին,  
Ընկերութիւն արա անդորր  
Իւր հովհական պարզ կեանքին:

## V.

Ազամայ մութը գեռ նոր վարատւած  
Եւ հորիզոնից գեռ կամաց-կամաց  
Նոր է լուսաստղը երեսը հանում,  
Որ Սաքօն ոչխարն արօտ է տանում:  
Գըքեղաղալար լեռների օղը  
Եւ շաղաթալթախ ծաղիկն ու խոտը  
Գրախատի անուշ կնորուկի նման,  
Կռատ բուրմունքով, շնչով կենական  
Լցնում են կործքը, վերացնում հողին....  
Ի՞նչը կը հասնի Սաքովի կեանքին:  
Ամեն առաւօտ տեսնում է աչքով  
Թէ արևելքում ինչպէս է շըքով,  
Ամպերի միջից արջնաթոյր և թուխ  
Բացւում արշալոյն ինչպէս հրաբուխ,  
Կամ թէ բոցավառ հըրդեհի նման,  
Որ թանձր ծխից յայտնում է իրան:  
Եւ առաջին շողն արևազալին  
Երբոր ընկնում է լեռների ծալին,  
Կարմըրին տալով, ասես թէ քըրքում,

Փայու ժանիքները վարդերանդ ներկում  
Մեր հուժիու Սաքօն այս ժամանակին  
Յենտած հովական երկայն մահակին,  
Ժակած փափախը ականջին թեքած,  
Թերմաշ եափենջին ուսովը ձրգած,  
Ինչպէս լեռների տէր ու թագաւոր,—  
    Նոր օրը գալիս,—  
    Իրան թեաւոր  
Երաժիշտներով ողջայն է տալիս:

Աւ սև ամպեր են գալիս հաւաքւոմ,  
Մթնում է երկնքն ու փայտակում,  
Սառած-սառանած երկերը վախից  
Ուզում է կարծես փախչել իւր տեղից  
Եւ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,  
Երբ ֆշացնում է, ինչպէս մի սև օձ,  
Թեքում, տնքում է ծառը հաստարմատ,  
Ամբողջ ծրմակը հեծծում յուսահատ.  
Ամպերը զոտում մըթնած երկնքից,  
Գետինը գողում, շարժում է հիմքից,  
Ապա երկինքը պատրուած կարծես,  
Հեղեղ է թափում կըժով ջըրի պէս,  
Հեղեղ, որ պէտքէ քո աչքով տեսնես,  
Ջիթերից ըրունես երկինքը հասնես,—  
Սաքօն ոչխարը ծմակն է քաշում,

Մի տերեալի ծառի տակ մտնում  
Եւ հետեւում է հանդարտ հայեացքով  
Թիսպոտ ամպերին, որ յամբ ընթայքով  
Գնում են դէս դէն, սարերով անցնում,  
Մոթ ծոցի միջին լախտեր խաղացնում,  
Հըրեղէն լախտեր, որոնց մի տուտը  
Հասնում է ներքեւ—մինչեւ անդունդը,  
Սատանաներին այնպէս գուացնում,  
Որ ձայնը մարդու ականջն է հասնում:

## VI.

Արել սարի ետևն է մտնում,  
Ցերեկը հատնում.  
Մթնաժուում են ձորն ու անտառը,  
Բայց դեռ չի մթնում երկնամերձ սարը.  
Ոտները ներքեւ խաւարում թագւած,  
Գաղաթն ալլում է լուսով շաղախւած,  
Մինչեւ հովիտից չար գողի նըման  
Գիշերւայ սուերը թագուն բարձրանում,  
    Լոյի—ցերեկւան  
Այն մնացորդն էլ յանկարծ կըլանում,  
Եւ ինքը խոժու, մռայլ ու ահեղ  
    Բազմում է այնտեղ,  
Լուսնեակի լուսով սարերի դըլիին  
Գնում՝ փաթաթւած իւր սև եափնջում,

Մինչեւ մօտակայ գիւղիցը կըրկին  
 Աքաղաղները ծուղուղու կանչում,  
 Կամ թէ արեի շողերն են ծագում—  
                         Աչքերը ծակում,  
 Հալածում դէպի անյալտ աշխարքի,  
                         Աշխարքի տակի  
                         Թածուկ ալրերը,  
 Ուր որ ապրում են մուժն ու դիշերը:

---

Իրիկունն եկաւ, մըզգուրներն \*) արդէն,  
 Հանդից հաւաքւել, վառել են օդէն  
 Ծհուն ու պըկուն խառնել են իրար,  
 Խաղում են, ասում,—խնդում միալար:  
 Եւ ախորժաճախն սրինդն հովւական  
 Խօսում է կարծես,—մին հովւի նման  
 Ռխարի շանն է ձախն տալիս, կանչում,  
 Մին էլ շան նման հաջում, կլանչում.....

Լսել ես, երբ լուսու դիշերւայ ժամին  
 Տերեներն զգոյշ շարժում է քամին,  
 Եւ կամ թէ նեղիկ լեռնային կիրճում  
 Ոնց է յուսահատ հողմը մուընչում:  
 Ականջ ես դրել, թէ ոնց է երգում  
 Առւակի կարկաչն անտառի խորքում,

\*) Մզգուր—հովիւ, տաւարած, խոզարած ևայլն:

Լսել ես հեղիկ խոխոջն աղբիւրի,  
 Փափուկ մեղեղին լեռնային ջրի...  
 Վմենքլոց ջոկած, առած մի հնչիւն,  
 Հնչում է լողիթ Սաքոյի շըհուն  
 Իսկ ընկերներից մէկը սրտալի  
 Երգում է, կանչում, ինչքան ձայն ունի:  
 Եւ մելամաղձոտ նրանց բայաթին  
 Գովեստ է տալիս վեհանձն լողիթին,  
 Կամ հալրենիքի հողին ու քարին,  
 Սիրավառ կանչում ոււաչեայ եարին....  
 Եւ ամեն մի ձայն այն երգում այնքան  
 Պարզ է և ուժգին, այնքան բնական,  
 Որ մարդ նոյն ժամին թովլած, սրտաթունդ,  
 Ելնում է-իշնում երկինք ու անդունդ:

Ապա խաղում են հերթով կենդապար,  
 Ետ-առաջ ոստնում, ցատքում անդադար,  
 Եւ յանկարծ կանդնում լրանց կոտրատում,  
 Ոտներով արագ գետնին վեր հասում:

Կոնաբոնուկ են անում իրար հետ,  
 Ջրջան են կազմում զոփի \*) են տալիս,  
 Երկու ոտն առաջ, իսկ մէկ ոտք ետ  
 Գնում ու դառնում—պտոյտ են գալիս:  
 Դեռը սկսում են կամաց-ծանրապար,  
 Իսկ յմոոյ միջակ. աստիճանարար  
 Արագացնում են, և պտոյտ առած

\*) Զոփի—եալի, շուրջպարի, գեօւքնդա:

Ամբողջ շըջանը գնում է թըլտած:  
 Երեմն ուռացիկ կործքերն ուռցնում,  
 Աղաղակում են, սուլում, շւայնում,  
 Մէկ էլ մխատին յանկարծ կորանում  
 Ու կրկին դքւում, կրկին տաքանում  
 Եւ ոգեզրած զետինը դոփում.  
 Թճորքը դողում և հող է թափում:  
 Նստում են մետոյ զիտեցածներից,  
 Իրանց պապերից, ծիծաղ բաներից  
 Պատմում են երկար, երկար, մինչև ոչ  
 Գիշերաւն կէսը և քընում անոշ:

### VIII.

Դէհ բարի դիշեր, իմ քաջ իզիթներ,  
 Դուք սինդ քննցէք մինչև լուսաղէմ,  
 Իսկ ես իմ շհուն վիշելու եմ դեռ,  
 Պէտք է ձեր սկասուին զեռ մի բան երդեմ:

«Լուսու ձորը կոխեց մոլթը,  
 Անլոյս մոլթը զիշերի,  
 Այստեղ-մթնում ձեր ֆերեղը  
 Երդում է անցքն իւր ջըրի:

Պատմում է այն հին օրերից,  
 Երբ որ ծնունդ է առել

Ով է անցել իւր ձորերից,  
 Ինչ գործեր է կատարել:

Եւ երբեմըն հառաչելով  
 Նրանց հոգւոցն է ասում,  
 Որոնք խեղզել իւր ջըրերով,  
 Հանդչում են իւր աւազում:

Պատմում է նա զիշերն ՚ի բուն  
 Գըլխի անցքերն իւր հին հին,  
 Թէւ խորժ է նորա լեզուն  
 Օտարածին հիւրերին:

Այս իրիկուն նորա ապիին  
 Թուրքի քոչ է վալր եկել,  
 Վալր է եկել և ահազին  
 Խարոյիները բորբոքել:

Սակայն ինչու մռալլած են  
 Թուխ դէմքերը թուրքերի,  
 Կամ թէ ինչու զեռ լռած են  
 Զայներն անհոդ երգերի:

Ճան է յոդնել ճանապարհից  
 Այն խուժանը անհանգիստ,  
 Վախենում է խորին ձորից,  
 Թէ զիշերը մոլթն է խիստ:

—Թուրքի համար ահաւոր չեն  
Ոչ մոթ զիշեր և ոչ ձոր,  
Բայց այս ձորը Լոռու ձորն է,  
Լոռեցին է ահաւոր:

Մէկ էլ տեսար մի թունդ որոտ  
Անտառիցը այն մըթին,  
Կը հանգցընի կրակի մօտ  
Տխուր նստած իդիթին.

Կամ յանպուղն ջահելները  
Վրայ կրտան զինավառ,  
Եւ կըշեն անտառները  
Թուրքի ջոկելն ու տաւար:

Կամ որ որ է մահակներով  
Մի խոռն ամբոխ կերեալ,  
Եթէ թուրքը գողոթիւնով  
Մի մեղք ունի իր վրայ:

Կամ ով զիտի չոբանները  
Ահը հանած սըբտերից,  
Ճանապարհին սիւրուները  
Անց են կացըել արտերից...

Նրա համար մռայլած են  
Թուխ դէմքերը թուրքերի,

Նրա համար և լուած են  
Ջայներն անհոգ երգերի....»

### VIII.

Սակայն ահազին ձորում այս զիշեր  
Մենակ է Սաքօն և չունի ընկեր:  
Բուխարու կողքին տխուր թեք ընկած  
Մտածում է նա իւր տատի պատմած  
Զարքերի մասին, որոնք միասին,  
Ծուռը տոներով, զիշերւան կիսին,  
Թուրքերի կանանց կերպարանք առած  
Յախնուում են միշտ միայնակ մարդկանց....  
Կամ ինչպէս քաջքերն այրերի մթնից,  
Ելր մարդ նայում է քարափի զլիսից  
Կամ թէ ուշացած անցնում է ձորով,  
Խարում են, կանչում ծանօթ ձայներով.  
Եւ մարդկանց նման խնջուք են սարքում,  
Զունայ են ածում, թմբուկ են զարկում....  
Այսպիսի դէպքեր շատ են պատահել,  
Նոյն խակ Սաքոյին քանին են պատմել....  
Եւ լիշողութիւնն անցած օրերից,  
Նորա մանկութեան երեկոներից,  
Երբ նա քաջքերից վախենում էր զեռ,  
Ետ բերեց վաղուց մռայլած ձայներ.  
Զայներ ահալի, տխուր պատմութեան

Չար ողիների արած չարութեան:  
Տատի խօսքերը նորա ականջին  
Ուրւաձայն, երկչոս հնչեցին կրկին.—

«Կասեն՝ Սաքօ, մեղ մօտ արի,  
Արի մեղ մօտ հարսանիք.  
Տես, մենք ուրախ պար ենք դալի—  
Սիրուն, շահել հարսն-աղջիկ:

Ինձ մօտ արի, ձւածեղ անեմ,  
Ինձ մօտ արի բլիթ տամ.  
Ես քո հօքերն... ես քո նանն եմ...  
Ես էլ աղիզ բարեկամ...

Սաքօ, Սաքօ, մեղ մօտ արի,  
Ես աղջիկը տես ինչ լաւն ա...  
Տես, ինչ ուրախ պար ենք դալի—  
Տարա նի նա, տարա նանա՛...»

Եւ խօլ պատկերներ, տղեղ, այլանդակ,  
Անհեթեթ շարքով, խառներամ, անկարդ,  
Ֆանրաշարժ եկան Սաքովի դիմաց  
Երևութք եղան—անցնում են կամաց...  
Անցնում են դանդաղ տուերների պէս,  
Չար ժպիտներով, ժանու ու մեերես....  
Աչքերը անթարթ կրասկին յառած  
Ֆանը է շնչում Սաքօն ահ առած,

Եւ առողջ կուրծքը լեռնական մարդու  
Ալեկոծում է կատկած ահարկու:

## IX.

Սրբնթաց պայրա, թէ գալ զիշատիչ  
Ճեշտակի անցաւ փարախի մօտով,  
Թէ այծեամն յանկալծ մօտակայ ժարուից  
Անդունդը մի քար զըլորեց սոտվ.  
Թէ հողմահարւած տերեւն էր զողում,  
Թէ երկչոս մուկը փաղեց պրեմախում,  
Թէ ոչխարների թոյլ մնչոցն էր այն,—  
Սաքովին թվաց, թէ մի ստնաձայն  
Եկաւ ու կանդնեց փարախի կողքին:

## X.

«Ո՞վ է հող թափում էս բուխուրակից...  
Ո՞վ է երգկալը մըտիկ տալիս ինձ....  
Ընչի համար է այնպէս ծիծաղում.  
Ո՞նց են պլրպած աչքերը փայլում....  
Ի՞նչ ստնաձայն էր, որ անցաւ կտրից....  
Ո՞վ է շունչ քաշում դըռան ետևից....  
Ո՞վ պէտք է լինի. ինչու չի խօսում...  
Ես կէս դիշերին ինչ բանէ ուզում...  
Ես ինչպէս եղաւ—ազաղիլ Զօրին

Զըսպատրուտորեց անժամ եկտորին....  
 Ես ի՞նչպէս եկաւ... չէ, սա ովորէ,  
 Ծանօթ ոքմին է, շունը սովոր է:  
 Իմ շան ահեցը էլ ով սիրտ կանի....  
 Իմացայ, ընկերը—Գէվօն կըլինի....  
 Սուտ վախեցնում է... հա, նա է նա....  
 Գէվօօ՛...

Զայն, ծպըտուն չըկայ.

Մենակ ահաւոր լռութեան միջում  
 Չորագետն է խուլ մրափած վշշում:  
 Եւ ով կըլինի զարթուն այս ժամին.  
 Աշխարհը քնած է—քնած է քամին,  
 Անքուն չարքերը չեն միմիայն քնած,  
 Ուրախ վխտում են ձորերը բոնած....  
 Եւ վազվզում են ստւերների պէս,  
 Եւ վրախում են տերեւների պէս...  
 Մինչեւ որ մենակ մի մարդ կըդտնեն,  
 Որ նորա սիրտը... փարախը մտնեն....  
 Աչքերը հանդչող կըրակին յառած,  
 Ծանըր է շնչում հովիւն ահառած,  
 Եւ առողջ կուրծքը լեռնական մարդու  
 Ալեկոծում է կասկած ահարկու.—  
 «Զէ, քամին էր էն... էն զայի շւաք...  
 Էն աստղեր էին աչքերի տեղակ,  
 Որ լուսածակից ներս էին ընկել....»  
 Բայց վախենում է նայել, ստուգել.

Սակայն ականջը ձայներ է լսում.  
 Կըսղով դալիս են, դուրսը փսփտում...:  
 Վախեցած Սաքօն դլուխը մի քիչ  
 Տեղեցը շարժեց,—աղաղակ, քըրքիչ,  
 Եւ դժոխալուր ձայներ ըլւրաւոր  
 Բունել էին զուսն ու կտուրը բոլոր...  
 Սիրտը թունդ առաւ, և վշաքաղած

Մի սարսուռ զզաց:

Գէպի դոնակը մթնած աչքերով  
 Յուսաձատ նայեց, մտքումը զօրով  
 «Նրանք են» ասաց, և դուռը բացւեց,  
 Թուրքի կանանցով փարախը լցւեց.  
 Փարախը լցւեց թուրքի կանանցով,  
 Ճիչ-հրըւոցով, հարայ—հլոցով....

Ինչպէս զիշերը երկնում սեակնած  
 Փալատակում է կայծակը յանկարծ,  
 Անսպէս մի կըրակ աչքերն առաւ  
 Եւ իզիթ Սաքօն փարախից թուաւ:

## XI.

Այն Լոռու ձորն է, որ հանդիպակաց  
 Փայտներն ամենի նօթերը կիտած,  
 Գէմողեմ կանդնած, յամառ և անթարթ  
 Հայեացքով իրար նայում են հանդարտ:

Աւ ծովի նման մըլարը կանդնած  
 Գրկում է նրանց կուրծքը կախընկած,  
 Որ կարծես ահա, հէնց այս վայրկենին  
 Վայր կընկնեն անահ անցւորի զլիին:  
 Ահոելի ձոր է. այնտեղ Դեբեղը  
 Փրփրած վազում է: Սրբնթաց գետը  
 Գոռում է, ինչպէս վիրաւոր գաղան,  
 Եւ աղաղակին այն երկրասասան  
 Խոր, լայնաբերան քարանձաւները  
 Կցում են իրանց քաշքի ձայները <sup>\*)</sup>  
 Կաղում վայրենի ներդաշնակութիւն.  
 Սարսափ է ազգում անսովոր մարդուն:  
 Դիշերը լուսնի երկչոտ շողերը  
 Երբոր մտնում են այն ահեղ ձորը  
 Եւ ալքերի <sup>\*\*) )</sup> հետ խաղում զողալով,  
 Խոյտ ալիքները խիտ խիտ շողալով  
 Յուղում են իրար ետևից փախչում,  
 Գերեղը խոտար անդունդի խորքում,  
 Մի արծաթափայլ նեղ շերտի նման  
 Պատոյտներ առած ձգում է երկայն:  
 Այս տախտի <sup>\*\*\*)</sup>) վրայ, այն ժայռի զլիին  
 Կանդնած է մենակ, խաւար ու լըռին

\*.) Քաշքի ձայն—արձագանք:

\*\*) Ալբ—ջրում բնակւող ողի, յաւերժահարսն:

\*\*\*) Տախտ—ձորի զառիվայրում տափարոկ տեղ, տեր-

բաս:

Մի քանդւած հին բերդ, մի աւերակ վանք,  
 Մուայլ ու տխուր ինչպէս զարհուրանք.  
 Իսկ քարի զլիից լուռ մարդու նման  
 Նախում է ձորին մի հին խաչարձան:

## XII.

Այն ձորում ահա, այն խաւար ձորում  
 Այս կէս զիշերին նա է թափառում,  
 Ահա նա ընկած քար ու թփերով  
 Վազում է զետի ժեռուտ ափերով:  
 Երկայն խանչալի դաստակը կողքին  
 Զարկում է զօտու երկաթեալ թողկին, <sup>\*)</sup>  
 Զըրխկըրխկում է, կարծես խը զարկով  
 Համրում է նրա քայլերը կարգով:  
 Ճնչում է գուռնան մութ քարանձաւից,  
 Զարքերը վազում նրա ետևից,  
 Դերեղն էլ անդուլ զուռում է, թէ «Հա,  
 Վաստեղ է Սաքօն, այստեղ է, ահա....»  
 Եւ զուրս են թռչում յորդ ալիքներից  
 Հերարձակ ալքերն իրար ետևից,  
 Վազում են բռնեն իզիթ Սաքոլին,  
 Որ տանեն զետի յատակը խորին.

\*) Թողկայ—մետաղեալ բան է, գործ է ածուռմ թէ գոտու ծալիերն ամբացնելու համար և թէ իբրև զարդ, որ անց են կացնում զօտին:

Բայց նա փախչում է,  
 Փախած կանչում է  
 Իւր հաւատարիմ միակ ընկերին,—  
 «Եկան, եկան, Զօրի հէյ,  
 Բոնի, Զօրի, արի հէյ...»  
 Ու բորբիկ թռչում քամուց էլ արագ,  
 Քար ու մաշտառուտ առած տոնատակ:  
 Սակայն առաջին ցոլացին աչքեր,  
 Թոփից դուրս թռան մի քանի քաջքեր.  
 Մի ակնթարթում նա իրան թափը  
 Կոտրեց և խսկոյն թողեց զետափը....  
 Արձագանք տւեց ձորն այդ միջոցին  
 Նրա ազաղլվ գամփով հաջոցին.  
 Փարախն էլ գուցէ մի դալ է մտել,  
 Եղքատի հօտը կերել, խեղտատել....  
 Խելազուրկ Սաքօն ոչինչ չի ցշում,  
 Քշում են նրան չարերը, քըշում,  
 Քաջքերն էլ ալլեց դուռնա-դհօլով  
 Խաբում-կանչում են ծանօթ ձախներով.—  
 «Սաքօն, Սաքօն, մեղ մօտ արի,  
 Արի մեղ մօտ հարսանիք.  
 Տես, մենք ուրախ պար ենք դալի,  
 Սիրուն, ջահել հարսն-աղջիկ:  
 Ինձ մօտ արի-ձւածեղ անեմ,  
 Ինձ մօտ արի — քեղ բան տամ.

Ես քո հօքիրն... ես քո նանն եմ...  
 Ես էլ սրտի բարեկամ....

Սաքօն, Սաքօն, մեղ մօտ արի—  
 իս աղջիկը տես ինչ լաւն ա....  
 Տես, ինչ ուրախ պար ենք դալի—  
 Տարա նի նա, տարա նանա՛...»

Իսկ Զորագետից ալքեր են թռչում...  
 Եւ ալիքները վրփրադէզ ուռչում,  
 Մուալի միջին ծփում են կայտառ,—  
 «Բոնեցէք, փախաւ Սաքօն խելագար...»

### XIII.

Այն ինչ այդ ժամին  
 Սաքովի նանը — պառաւ նազանին  
 Հանգչող բուխարու դիմացը նստած,  
 Փոքրիկ թռոներին շուրջը հաւաքած  
 Պատմում էր նրանց խաւար աշխարհից,  
 Հարս-մարդագէլից, դեերից, չարից,  
 Աւ սատանայից, քաջքից ու ալքից,  
 Որ մարդու խաբում, հանում են խելքից,  
 Տանից թռցընում, դցում քարէքար,  
 Քշում են, քշում, տանջում անդադար,

Աիրտը այրում են անշէջ կըրակով,  
Մէջքը վառում են օձի մտրակով,  
Զորելը դցում.  
Ֆեծում, հալածում....

XIV.

Եւ առաւօտը—վաղ լուսադէմին,  
Երբ լոյն ու մուժը դեռ կռւում էին,  
Զէին բաժանւել սակայն իրարից,  
Խելագար Սաքօն դուրս եկաւ ձորից,  
Իրանց տան դուռը բաց արեց թափով,  
Ներս ընկաւ յանկարձ, դուաց սարսափով —  
«Վայ, եկան, մէջքըս, ձեզ մատաղ, եկան....»  
Եւ խկոյն օձի շանժածի նման

Դուրս վախաւ կրկին:  
Հայր, մայր, տատ, եղբայր, երեխայ ու կին  
Դուրս ընկան նորա ետևից լալով.  
Բայց նա վախչում էր աղաղակելով  
«Քօրի, հէյ,  
Արի, հէյ....»

1889 թ.



Վաճառում են՝

	Ա.	Լ.
1. ՄԱՐԻՍԵԱՆ ՏԻԿ., Հեղինէ . . . . .	1	"
2. ԹՈՒՄԱՆԵԱՆ Յ., Բանաստեղծութ. I —	35	
3. > > II (սպառ.)		
4. > Φաշնակներ. . . . (սպառ.)		
5. ՍԵՆԿԵՎԻՉ, Առանց դաւանանքի, թարգմ.		
6. ՅՈՐԻԶՈՆ, 1894 թ. . . . .	1	"
7. ԲԱՑՐԸՆ, Ջիլիոնի կալանաւորը, թարգմ.		
8. ԹՈՒՄԱՆԵԱՆ Յ., Լոռեցի Սաքօն . . .	— 20	
9. Թումանեանի. . . . .	— 10	

Դիմել. Տիֆլիս. Փ. Վարդարյան.

0014036

2013

«Ազգային գրադարան»



NL0014036

